## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**N 63**

**«23» «03» 2020թ.**

☎ (0-255) 6-00-58
Էլ-փոստ saramej.lori@mta.gov.am

ՀՀ Լոռու մարզպետ
Պարոն Ա.Ղուկասյանին

Հարգելի պարոն մարզպետ.
Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի ավագանու թիվ 04-Ա, 05-Ա, 06-Ա, 07-Ա որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

**ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
գ.Սարամեջ (23.03.2020թ.)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58
Էլ հասցե saramej.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» Մարտի 2020 թվականի թիվ 04–Ա

### ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով , Սարամեջ համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի գիշերային լուսավորությունը ապահովելու համար բյուջեից տրամադրել 13.547.420 ՀՀ դրամ, որը սուբսիդավորման արդյունքում ընդհանուր կազմում է 6.096.400ՀՀ դրամ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ՝ (4) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
գ .Սարամեջ (20.03.2020 թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» Մարտի 2020 թվականի N 05-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , ՀՀ << Հողային օրենսգրքի>> 5-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 06.09.2005թ. թիվ 878-Ն որոշումը Սարամեջ համայնքի ավագանին**

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Հաստատել Սարամեջ համայնքի համանքային սեփականություն հանդիսացող, ՀՀ կառավարության 06.09.2005թ. թիվ 878 –Ն որոշման 5-րդ հավելվածով համայնքին փոխանցված 06-098-0118-0001 ծածկագրի 16.57 հա, կադաստրային քարտեզի 06-098-0118-0001 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտից առանձնացված 0.125 հա հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի :

2.Սարամեջ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-098-0118-0001 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի արոտից առանձնացված 0.125 հա հողամասը, համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, առանձնացնել, որպես առանձին միավոր :

3.Համայնքի սեփականություն հանդիսացող 06-098-0118-0001 ծածկագրով 0.125 հա գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ 4-րդ կարգի արոտավայրը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, փոխադրել գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքի՝ որպես 4-րդ կարգի վարելահող :

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ՝ (4) ԴԵՄ՝ (0) ՁԵՌՆՊԱՀ՝ (0)

1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (20.03.2020 թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«20» մարտի 2020 թվական, 06-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՄՈ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՍԱՆՆԱ ԵՂԻԿՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 63,64 և 65 հոդվածներով սահմանված կարգով, հաշվի առնելով Սարամեջ համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող 0014-0003 ծածկագրի տակ գտնվող 207.0 քմ բնակելի տունը և նրան կից 0,143 հա տնամերձ հողամասը նվիրատվությամբ հանձնել Կամո Հովհաննիսյանին և Սուսաննա Եղիկյանին՝ որպես բնակարանի կարիք ունեցող ընտանիք :
2. Համայնքի ղեկավարի հետ կնքել նվիրատվության պայմանագիր, որը ենթակա է պետական գրանցման :
3. Կատարել փոփոխություններ գույքամատյանում և հողային հաշվեկշռում :

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԿՈՂՄ՝(4 ) ԴԵՄ՝(0) ՁԵՌՆՊԱՀ՝(0)

1. ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
2. ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ
3. ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ
4. ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ
5. ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (20.03.2020 թ.) Կ.Տ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարամեջ համայնք, հասցե գ. Սարամեջ
Հեռ.0255-6-00-58 էլ հասցե saramej.lori@mta.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 Մարտի 2020 թվականի N 07-Ա

### ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Սարամեջ համայնքի ավագանու անդամ Աղվան Մկրտչյանի լիազորությունները դադարեցնել 2019 և 2020 թվականների ընթացքում ավագանու նիստերին չներկայանալու պատճառով ։

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ | ԿՈՂՄ՝(4) | ԴԵՄ՝(0) | ՁԵՌՆՊԱՀ՝(0) |
|---|---|---|---|
| 1.ՎԱՀՐԱՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ | | | |
| 2.ՇԱԼԻԿՈ ԽԱՉԱՏՐՅԱՆ | | | |
| 3.ԿԱՐԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ | | | |
| 4.ԷԼՖԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ | | | |
| 5.ՍԼԱՎԻԿ ՏՈՆՈՅԱՆ | | | |

ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

գ .Սարամեջ (20.03.2020 թ.) Կ.Տ